ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հունաստանի Հանրապետության կառավարությունը, որոնք այսուհետև կանվանվեն Պայմանավորվող կողմեր,

ելնելով միմյանց երկրների միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության զարգացման և ամրապնդման անհրաժեշտությունից,

ցանկանալով ամրապնդել բարեկամական կապերը իրենց երկրների միջև,

ընդունելով զբոսաշրջության կարևորությունը տնտեսության զարգացման, ժողովուրդների միջև փոխըմբռնման, բարի կամքի ապահովման և հարաբերությունների սերտացման համար,

հիմնվելով իրավահավասարության և փոխշահավետության հիմունքների վրա,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը սույն Համաձայնագրին և իրենց երկրների ներքին օրենսդրությանը համապատասխան կնպաստեն միմյանց երկրների միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանը:

Հոդված 2

Պայմանավորվող կողմերը կձգտեն երկու երկրների միջև զբոսաշրջության փոխանակման ասպարեզում դյուրացնել մաքսային և այլ ձևակերպումներն իրենց երկրների օրենքների ու կանոնների համաձայն՝ նկատի առնելով նաև Կողմերի միջազգային պարտավորությունները, և կաջակցեն երկու երկրների միջև զբոսաշրջության ոլորտում գործող ճամփորդական գործակալությունների, ինչպես նաև ձեռնարկությունների և կազմակերպությունների համագործակցությանը:

Հոդված 3

Մյուս Կողմի հասարակությանը, նրանց զբոսաշրջության տեսարժան վայրերին ավելի լավ ծանոթանալու, երկկողմ զբոսաշրջության տեղաշարժն ավելացնելու նպատակով Պայմանավորվող կողմերը կխրախուսեն փոխադարձ զբոսաշրջության բարենպաստ պայմանների ստեղծմանը տեղեկատվության, գովազդային և վավերագրական այլ նյութերի փոխանակության միջոցով՝ համաձայն իրենց օրենքներին և կանոններին:

Հոդված 4

Պայմանավորվող կողմերը, համաձայն երկու երկրներում գործող օրենսդրության, կխրախուսեն և փոխադարձաբար դյուրին կդարձնեն հույն և հայ ձեռներեցների, ինչպես նաև համատեղ ձեռնարկությունների ներդրումների հնարավորությունները զբոսաշրջության սեկտորներում: Այդ նպատակով նրանք կանոնավոր կերպով կհաղորդակցվեն զբոսաշրջության ասպարեզում ազգային օրենսդրությամբ նախատեսված ներդրումների դրդապատճառների, ինչպես նաև յուրաքանչյուր երկրում նման ներդրումների առկա հնարավորությունների մասին:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն բոլոր երկկողմ համագործակցության ձևերը՝ առանձին ուշադրություն դարձնելով «նոու-հաու»-ի և գործնական փորձի փոխանակմանը իրենց երկրներում զբոսաշրջության բնագավառում ակտիվ գործող կազմակերպությունների և հաստատությունների միջև:

Հոդված 6

Պայմանավորվող կողմերը կաջակցեն երկկողմ համագործակցությանը զբոսաշրջության ոլորտում գործող գործակալությունների և ձեռնարկությունների միջև՝ երրորդ երկրներից զբոսաշրջիկների ներհոսքին նպաստելու նպատակով:

Հոդված 7

Պայմանավորվող կողմերը տեղեկություն և փաստաթղթեր կփոխանակեն՝ կապված վիճակագրության, օրենսդրության, ինչպես

նաև զբոսաշրջության զարգացման ուսումնասիրման և հետազոտման հետ, կուսումնասիրեն զբոսաշրջության ոլորտում աշխատողների մասնագիտական վերապատրաստման բնագավառում համագործակցության բոլոր հնարավոր ձևերը:

Հոդված 8

Պայմանավորվող կողմերը կարող են միմյանց տարածքում հիմնադրել ազգային զբոսաշրջության պաշտոնական տեղեկատվական ներկայացուցչություններ, որոնք չեն զբաղվի առևտրային գործունեությամբ, և որոնց համագործակցությունը կկարգավորվի հենց այդ նպատակի համար կազմված հատուկ պայմանագրով:

Հոդված 9

Կողմերի ազգային զբոսաշրջության ղեկավար մարմինները կզարգացնեն համագործակցությունը Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության, ինչպես նաև այլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում, որոնց երկու Կողմերն էլ անդամակցում են:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը իրականացնելու նպատակով երկկողմ խորհրդակցությունների և իրավազոր իշխանությունների հանձնարարականների ներկայացման միջոցով պարբերաբար կգումարվի համատեղ հանձնաժողով, որը կազմված կլինի յուրաքանչյուր երկրի հավասար թվով լիազորված ներկայացուցիչներից: Կողմերը կարող են մասնակցելու հրավիրել իրենց ներկայացուցիչներին և մասնագետներին ինչպես պետական, այնպես էլ մասնավոր զբոսաշրջության սեկտորից:

Հանձնաժողովի հանդիպումները տեղի կունենան հաջորդաբար յուրաքանչյուր երկրում՝ Պայմանավորվող կողմերի համաձայնեցրած ժամկետներում:

Յուրաքանչյուր հանդիպում կնախագահի այն երկրի պատվիրակության ղեկավարը, որտեղ այն տեղի է ունենում:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պայմանավորվող կողմերի ներքին օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ ընթացակարգերի ավարտման մասին դիվանագիտական ճանապարհով միմյանց տեղեկացնելու օրվանից:

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կլինի հինգ տարի ժամկետով, այն կարող է ինքնաբերաբար երկարաձգվել ևս հինգ տարով, եթե Պայմանավորվող Կողմերից որևէ մեկը սույն Համաձայնագրի ժամկետը լրանալուց անվազն վեց ամիս առաջ մյուս Պայմանավորվող կողմին չի հայտնի այն դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Աթենք քաղաքում 1996 թվականի հունիսի 17-ին, երկու բնօրինակով, հայերեն, հունարեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Մեկնաբանման տարաձայնության դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1997 թվականի հունիսի 9-ից: